



Եվրոպայում անվտանգության և համագործակցության
կազմակերպություն
ԶԼՄ-ների ազատության հարցերով ներկայացուցչի
գրասենյակ

**«ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

Հանձնարարվել է ԶԼՄ-ների ազատության հարցերով ներկայացուցչի գրասենյակի կողմից: Պատրաստվել է հաղորդակցության և տեղեկատվական իրավունքի անկախ խորհրդատու, Տալլինի տեխնոլոգիական համալսարանի իրավաբանական ֆակուլտետի պրոֆեսոր, դոկտոր Քեթրին Նեյման Միթթալֆի կողմից

2016 թ., հունվար

Բովանդակություն

1. Համառոտ շարադրանք	3
2. Առաջարկություններ	4
3. Վերլուծություն.....	5
III.1 Ներածություն.....	5
III.2 Միջազգային չափանիշներ և ԵԱՀԿ առջև ստանձնած պարտավորություններ	5
III.3 Առանձին հոդվածների վերլուծություն.....	7

1. Համառոտ շարադրանք

Սույն հաշվետվության մեջ վերլուծվում է 2015 թվականի դեկտեմբերի՝ «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքը: Օրենքի գնահատումը կատարվել է միջազգային չափանիշների և ԵԱՀԿ պարտավորությունների հիման վրա: Այդ չափանիշները և պարտավորությունները ցույց են տալիս, որ խոսքի ազատությունը բացարձակ իրավունք չէ, սակայն դրա ցանկացած ուղղակի կամ անուղղակի սահմանափակում պետք է արժանանա մանրամասն դիտարկման: Այդ թվում խոսքի ազատությունը՝ ոչ թե որպես պարզապես հիմնական իրավունք, այլ նաև որպես մարդու այլ իրավունքների և հիմնարար ազատությունների կենսագործման նախապայման: Այդ առումով խիստ կարևորվում են ազատ խոսքի ցանկացած սահմանափակման համաչափությունը և անհրաժեշտությունը:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու հիմնական նպատակը թվային հեռարձակման համար պատրաստվելն է: Փոփոխությունները ողջունելի են, քանի որ դրանք մասնավոր ընկերություններին տալիս են թվային հեռարձակման ծառայություն մատուցելու հնարավորություն: Բովանդակության մեծ մասն ունի գործնական ու տեխնիկական բնույթ և խոսքի ազատության տեսանկյունից մտահոգություններ չի առաջացնում: Միևնույն ժամանակ, առկա են որոշ ոչ հստակ ձևակերպումներ և հարցեր, որոնք կարող էին դիտարկվել մի փոքր այլ կերպ՝ միջազգային լավագույն չափանիշներին էլ ավելի համահունչ դարձնելու համար: Այդ հարցերի վերաբերյալ ներկայացված առաջարկությունները տեղ են գտել «Առանձին հոդվածների վերլուծության» բաժնում:

Հիմնական մտահոգությունն այն է, որ մասնավոր ընկերությունների համար սահմանված որոշ պահանջների բավարարումը կարող է բարդ լինել, և, հետևաբար, կարող է ապախրախուսել ակտիվ շուկան: Մասնավոր ընկերությունների վերաբերյալ կոնկրետ պահանջները պետք է լինեն համաչափ ու անհրաժեշտ: Մասնավոր ընկերությունները պետք է կարողանան աշխատել շուկայական պայմաններում և ցանկացած պահանջ պետք է հստակ լինի:

Կարևոր է նաև, որ չհետաձգվի թվային մուլտիպլեքսորների լիցենզավորման գործընթացը: Հարկ է, որ օրենքի նախագիծը ավելի որոշակի լինի այն պայմանների առումով, որոնց դեպքում նման հետաձգումը կարող է հնարավոր լինել:

Կատարվել են նաև այլ, թվայնացման հետ կապ չունեցող լրացումներ: Դրանք հիմնականում վիճահարույց չեն:

2. Առաջարկություններ

- Թվային հեռարձակման բազմաբնույթ միջավայր ստեղծելու համար կարևոր է ունենալ գրավիչ և իրատեսական շուկա մասնավոր մուլտիպլեքսորների համար: Նրանց գործունեության կարգի վերաբերյալ սահմանափակումները պետք է լինեն նվազագույն քանակությամբ և համապատասխանեն հայաստանյան իրականությանը: Կարելի է առաջադրել կայունությունն ապահովող հատուկ պահանջներ, ինչպիսին է՝ լիցենզավորման չափորոշիչը կարգավորողի կողմից:
- Անհրաժեշտ է, որ մասնավոր օպերատորներին վերաբերող ցանկացած սահմանափակում լինի շատ հստակ (ուստի, օրենքում պետք է սահմանել օրինակ՝ ինչ է «հաղորդակցության ցանցը»): Կարելի է վերազնահատել ենթակառուցվածքի բոլոր բաղադրիչները որպես սեփականություն ունենալու անհրաժեշտությունը:
- Առաջարկված սահմանումները պետք է վերանայել՝ գործող օրենքին համապատասխանեցնելու և ցանկացած նորմատիվ ենթադրություններից դրանք զերծ պահելու համար:
- Չպետք է լինի որևէ հնարավորություն՝ մրցույթների հայտարարումը հետաձգելու համար:
- Եթե անցումային ժամանակաշրջանը կարճ է, ինչպիսին այն պետք է լինի, ապա չպետք է կազմակերպվի որևէ նոր մրցույթ, փոխարենը պետք է թույլատրել, որ տեղական հեռուստառադիոկայանները շարունակեն գործել մինչև թվային մուլտիպլեքսորները կսկսեն իրենց գործունեությունը:

3. Վերլուծություն

III.1 Ներածություն

2015 թվականի դեկտեմբերի «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի դրույթներից շատերի նպատակը թվային հեռարձակման համար պատրաստվելն է: Հայաստանը երկար տարիներ աշխատել է այդ անցման օրենսդրական, կարգավորման և գործնական մանրամասների վրա: Պատշաճ օրենսդրական դաշտի ապահովումն անհրաժեշտ է շուկայի մասնակիցների համար՝ օրենսդրական որոշակիություն ունենալու հնարավորության տեսանկյունից: Ուստի, պետք է ողջունել օրենքը: Այն հնարավորություն է տալիս մասնավոր ընկերություններին մասնակցելու թվային հեռարձակման շուկային: Բովանդակությունը մեծամասամբ ունի գործնական ու տեխնիկական բնույթ և մտահոգություններ չի առաջացնում խոսքի ազատության տեսանկյունից: Այնուամենայնիվ, կան որոշ անհստակություններ և մի քանի հարցեր, որոնց կարելի էր անդրադառնալ մի փոքր այլ կերպ՝ դրանք լավագույն միջազգային չափանիշներին էլ ավելի համահունչ դարձնելու համար:

Հիմնական մտահոգությունն այն է, որ օրենքը թերևս բավականին խիստ պահանջներ է սահմանում մասնավոր մուլտիպլեքս օպերատորների համար, ինչը կարող է նվազ գրավիչ դարձնել շուկան: Կարգավորվող շուկաներում լիցենզավորման համար պահանջներ սահմանելը համահունչ է միջազգային գործելակարգին, բայց այդ պահանջները պետք է լինեն նվազագույն և կիրառվեն միայն այն դեպքում, երբ շուկան ինքը բավարար չափով չի հոգում նման անհրաժեշտության մասին: Ռիսկ կարող է լինել այն առումով, որ որոշ պայմաններ հետ կպահեն շուկայի պոտենցիալ մասնակիցներին:

Որոշ դրույթներ (ներառյալ այն հարցերի մասին, որոնք ուղղակիորեն կապված չեն թվայնացման հետ և վերաբերում են օրինակ՝ լիցենզավորմանը) մասամբ հստակ չեն: Այդպիսի մի անհստակություն, որը կարող է ռիսկային լինել, մուլտիպլեքս լիցենզիայի համար հայտարարվող մրցույթի հետաձգման հնարավորությունն է:

III.2 Միջազգային չափանիշներ և ԵԱՀԿ առջև ստանձնած պարտավորություններ

Սույն հաշվետվությունը հիմնված է ԵԱՀԿ խոսքի ազատության մանդատի առնչությամբ միջազգային գործիքակազմերում, ինչպիսիք են՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը և Քաղաքացիական ու քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի Հոդված 19-ը, սահմանված պարտավորությունների վրա, որոնց կատարումը ստանձնել են ԵԱՀԿ մասնակից պետությունները, ներառյալ Հայաստանի Հանրապետությունը¹:

Համընդհանուր հռչակագրի Հոդված 19-ում նշված է, որ «Յուրաքանչյուր ոք ունի կարծիք ունենալու և արտահայտվելու ազատության իրավունք, և այդ իրավունքը ներառում է

¹ Հելսինկյան եզրափակիչ ակտ (1975թ.), Մաս VII, կրկնվում է օրինակ՝ ԵԱՀԿ մարդու իրավունքներին և ժողովրդավարությանը նվիրված համաժողովի՝ Կոպենհագենի եզրափակիչ փաստաթղթում (1990թ.) և այլ հռչակագրերում:

առանց միջամտության կարծիք ունենալու և անկախ սահմաններից ու ցանկացած լրատվամիջոցներով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և հաղորդելու ազատության իրավունքը»։ Այս իրավունքը հետագայում նշվել և իրավաբանորեն պարտադիր է դարձել Քաղաքացիական ու քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի Հոդված 19-ում։

Խոսքի ազատությունը սահմանված է նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի (ՄԻԵԿ) Հոդված 10-ում²։

«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք։ Այս իրավունքը ներառում է կարծիք ունենալու, գաղափարներ և տեղեկություններ ստանալու և հաղորդելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության և անկախ սահմաններից։ Այս հոդվածը չի արգելում, որ Պետությունները լիցենզավորում պահանջեն հեռարձակող, հեռուստատեսային կամ կինեմատոգրաֆիական ձեռնարկություններից։

2. Այս ազատությունների կենսագործումը, քանի որ այն իրականացվում է պարտականությունների և պարտավորությունների համաձայն, կարող է լինել այն նորմերի և կանոնների, պայմանների, սահմանափակումների կամ տուգանքների խնդրո առարկա, որոնք սահմանված են օրենքով ու անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հանրության անվտանգության, անկարգությունների կամ հանցագործությունների կանխարգելման, առողջության կամ բարոյական նորմերի պատշպանության, այլ անձանց հեղինակության կամ իրավունքների պաշտպանության, կոնֆիդենցիալ պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտման կանխման կամ դատական համակարգի հեղինակության ու անաչառության պահպանման համար»։

1999 թվականին ԵԱՀԿ Եվրոպական անվտանգության խարտիայում ընդգծված է ազատ ու անկախ մեդիայի դերը՝ որպես ցանկացած ժողովրդավարական, ազատ ու բաց հասարակության էական բաղադրիչ³։ ԵԱՀԿ մամուլի ազատության ներկայացուցչի մանդատով (որի հիմքում ընկած են ԵԱՀԿ սկզբունքները և պարտավորությունները), նախատեսված է դիտարկել մեդիայի համապատասխան զարգացումները բոլոր մասնակից Պետություններում և դրա հիման վրա սատարել ու նպաստել խոսքի ազատությանը և ազատ մեդիային վերաբերող ԵԱՀԿ սկզբունքներին և պարտավորություններին լիարժեք համապատասխանությանը⁴։

Յուրաքանչյուր երկիր ունի իր մեդիա քաղաքականության և օրենքների մանրամասները որոշելու իրավունք։ Եվրոպական կոնվենցիայի Հոդված 10-ում հստակորեն նշված է լիցենզավորման կարգ ունենալու իրավունքը, ինչը համապատասխանում է այս օրենքին։ Միջազգային լավագույն գործելակարգերում մշակված է, թե ինչպես լավագույնս հարգել խոսքի ազատության մասով միջազգային պարտավորություններում ընդգրկված սկզբունքները և ապահովել այդ ազատության կենսագործման հնարավորությունը գործնականում։ Այս համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից սահմանված սկզբունքներում նշված է, որ խիստ կարևոր է, որ մարդու իրավունքների, այդ թվում խոսքի ազատության սահմանափակումները լինեն համաչափ,

² Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիա, Հոմ, 4.11.1950թ., www.echr.coe.int/NR/DC13/Convention_ENG.pdf

³ Տես ԵԱՀԿ ստամբուլյան զազաթնաժողովի ժամանակ ընդունված Եվրոպայի անվտանգության մասին խարտիայի կետ 26-ը, 1999թ., http://www.osce.org/documents/mcs/1999/11/17497_en.pdf

⁴ ԵԱՀԿ խոսքի ազատության հարցով ներկայացուցչի 1997 թվականի մանդատ, կետ 2, <http://www.osce.org/pc/40>

անհրաժեշտ լինեն ժողովրդավարական հասարակությունում և սահմանված լինեն օրենքում: Խոսքի ազատության սահմանափակումներ պետք է կատարել մեծ զգուշությամբ, հաշվի առնելով այդ իրավունքի կարևորությունը՝ ոչ միայն որպես հիմնարար իրավունք, այլ նաև որպես մարդու շատ այլ իրավունքները և հիմնարար ազատությունները կենսագործելու նախապայման:

Ինչ վերաբերում է լիցենզավորման չափորոշիչներին և գործընթացներին, ներառյալ այն հարցերը, որոնց առնչվում է այս փաստաթղթում վերլուծված օրենքը, ապա խոսքի ազատության սկզբունքների կարևորությունը այն է, որ այդ չափորոշիչները և գործընթացները չպետք է կանխարգելեն կամ խոչընդոտեն ստեղծեն ազատ մեդիայի կամ հաղորդակցության շուկայի այլ մասնակիցների աշխատանքների համար: Կանոնները պետք է լինեն օրինական, ինչպես նաև կիրառվեն համամասնորեն:

III.3 Առանձին հոդվածների վերլուծություն

Հոդված 1

Փոփոխությունների մասին օրենքի Հոդված 1-ում ներկայացված են «Ռադիոյի և հեռուստատեսության մասին» ՀՀ օրենքի Հոդված 3-ի նոր սահմանումները: Դրանցում ավելացվել են նոր սահմանումներ, օրինակ, մասնավոր և պետական մուլտիպլեքսորի, ինչպես նաև հեռուստառադիոընկերության և հանրային հեռարձակման թվային ցանցի մասին: Գործող օրենքում առկա է մուլտիպլեքսորի սահմանումը, որը մի փոքր տարբերվում է խնդրո առարկա օրենքի սահմանումներից, ինչը կարող է շփոթություն առաջացնել: Իսկ եթե կարևոր է, որ օրենքում լինեն առանձին սահմանումներ մասնավորի և պետականի համար, ապա ավելի լավ կլինի հանել մուլտիպլեքսորի մասին եղած սահմանումը, որում նշված է, որ մուլտիպլեքսորը Ազգային հանձնաժողովի կողմից լիցենզավորված իրավաբանական անձ է: Սա լավ սահմանում չէ, քանի որ ընկերությունը՝ որպես այդպիսին, կարող է գոյություն ունենալ և իրականում ունենալ իրավական պարտականություններ *նախքան* լիցենզավորումը (օրինակ՝ լիցենզիա ստանալու պարտականություն), սակայն այս սահմանմամբ այն մասնավոր մուլտիպլեքսոր չէ՝ նախքան լիցենզիա ստանալը: Սահմանումների վերաբերյալ մյուս մեկնաբանությունը այն է, որ տեղական հեռուստառադիոընկերությունը վերաբերում է միայն այն ընկերություններին, որոնք գոյություն են ունեցել մինչև 2015 թվականի հունվարի 1-ը: Սա բացատրվում է նրանով, որ այս եզրույթը օգտագործվում է միայն Հոդված 62-ի նոր կետի համար (տես՝ Հոդված 9), որում սահմանված է անցումային կարգը: Սա սխալ չէ, բայց մի փոքր տարօրինակ է թվում սահմանումը այս կերպ սահմանափակելը (քանի որ տեղական հեռուստառադիոընկերությունը սովորական խոսքում ավելի լայն և ավելի ընդհանուր եզրույթ է), ուստի ավելի հստակ կլիներ դա պարզապես օգտագործել օրենքի անցումային դրույթներում:

Հոդված 2

Այս Հոդվածով նոր կետ է ավելանում «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքի Հոդված 9-ում՝ կետ 3: Դրանում նախատեսված է, որ գովազդի հեռարձակումը արգելված է օտարերկրյա հաղորդումների վերահեռարձակման ժամանակ, եթե միջազգային

պայմանագրերով այլ բան չի նախատեսված: Արգելվում է տեղական գովազդների, ինչպես նաև վերահեռարձակվող գովազդների հեռարձակումը: Ամեն երկիր ինքն է որոշում իր գովազդի կանոնների մանրամասները և չկա մանրամասն լավագույն միջազգային գործելակարգ, ուստի ոչինչ չի խոչընդոտում այդ դրույթին, սակայն այն կարող է հարց առաջացնել առ այն, թե ինչու վերահեռարձակման մասին այս կոնկրետ կանոնը արգելում է նաև տեղական գովազդները:

Այս արգելքի նախադրյալը հիմնավորման մեջ ներկայացված է որպես մի խնդիր, երբ Հայաստանում վերահեռարձակվող ալիքներով վաճառվող մի շարք ապրանքների և ծառայությունների գովազդի համար հարկեր չեն վճարվում: Ինչպես նշված է հիմնավորման մեջ, խնդիրը էլ ավելի արդիական է դառնում մասնավոր մուլտիպլեքսորների գործունեության հետ կապված, երբ վերահեռարձակող հեռուստառադիոհաղորդումների քանակը էականորեն կավելանա: Այս վերջին պնդումը ճիշտ է և խնդրին անդրադառնալը հիմնավորված է, բայց, այնուամենայնիվ, այն լիարժեք չի բացատրում, թե ինչու հեռարձակողները չեն կարող ընդգրկել տեղական գովազդներ (և վճարել դրանց համար նախատեսված հարկերը): Այնուամենայնիվ, թեպետ դա պարզ չէ, սակայն գովազդի կանոնները որոշելու հարցը օրենսդրի խնդիրն է, որը պետք է հաշվի առնի այն, որ մասնավոր հեռարձակողները պետք է ունենան բավարար եկամուտ ստանալու ողջամիտ հնարավորություն:

Հոդված 3

Օրենքի նախագծի հիմնական հոդվածը Հոդված 3-ն է, որը «Ռադիոյի և հեռուստատեսության մասին» օրենքը համալրում է մասնավոր մուլտիպլեքսորների լիցենզավորման մասին նոր՝ 6.1 բաժնով: Առաջին նոր հոդվածը (Հոդված 55) սահմանում է, որ մասնավոր մուլտիպլեքսորների լիցենզավորումը պետք է իրականացնի կարգավորողը՝ Ազգային Հանձնաժողովը: Այս պահանջը այստեղ շատ ավելի տեղին է, քան սահմանումների մեջ, ինչպես արդեն նշվել է վերը: Թափանցիկ ու օբյեկտիվ գործընթացի առկայության դեպքում, չկա որևէ առարկություն մասնավոր մուլտիպլեքսորների լիցենզավորման կապված հետ, ինչը, իրականում համահունչ է միջազգային գործելակարգին: Խիստ կարևոր է բաց ու ոչ խտրական ընթացակարգի անհրաժեշտությունը⁵:

Մուլտիպլեքսորները պետք է լինեն հայաստանյան իրավաբանական անձինք: Քաղաքացիության նման պահանջը բավականին ընդունված է մեդիա ընկերությունների համար: Հոդվածում մի փոքր շփոթություն է առաջացնում այն, որ «որոշումների ընդունման համար»՝ օտարերկրյա կապիտալի մասնակցության թույլատրելի բաժինը մինչև 50% է: Ուղիղ 50%-ով հավանաբար հնարավոր չէ ունենալ ձայների որոշիչ մեծամասնություն: Քաղաքացիության պահանջի մասով բացառությունները կարելի է կատարել միջազգային համաձայնագրերով:

⁵ 2015 թվականին Եվրոպական Միության արդարադատության դատարանը (C-376/13-ի գործով որոշում, Եվրոպական հանձնաժողովը ընդդեմ Բուլղարիայի հանրապետության, 2015 թվականի ապրիլի 23/European Commission v Republic of Bulgaria, 23 April 2015) անդրադարձել է մուլտիպլեքսորների լիցենզավորման գործընթացին, կայացնելով որոշում, որ դրանում չափազանց շատ են սահմանափակումները: Այս գործը վերաբերում է ԵՄ կանոնների մանրամասներին, որոնք կիրառելի չեն Հայաստանի համար, սակայն կարելի է ասել նաև, որ դրանում շեշտվում է բաց գործընթացի ընդհանուր լավագույն գործելակարգը, կամ ամեն դեպքում առկա են հստակ հիմնավորումներ դիմողների և լիցենզիաների տրամադրման ցանկացած սահմանափակումների վերաբերյալ:

Հողված 55-ի երկրորդ կետի համաձայն, մասնավոր մուլտիպլեքսորների սփռման տարածքը չպետք է լինի ավելի փոքր՝ քան Հայաստանի հանրային հեռարձակման թվային ցանցի սփռման տարածքը, և մուլտիպլեքսորը պետք է ունենա իր սեփական էլեկտրոնային հաղորդակցությունների ցանցը: Սա արդարացի պահանջ է, որը կարող է խթանվել տնտեսական գործունեությունը: Լիցենզավորման փաստաթղթերում պետք է նշել ստույգ պահանջները, որպեսզի դիմողներն ունենան հստակ կանոններ ստույգ ակնկալիքների մասին: Այնուամենայնիվ, պետք է հաշվի առնել և մանրամասն վերլուծել մեդիա բազմակարծության հնարավոր հետևանքները: Երրորդ կետում շեշտվում է, որ ցանցի բոլոր բաղադրիչները պետք է լինեն մուլտիպլեքսորի սեփականությունը: Պարզ չէ նման պահանջի անհրաժեշտությունը, քանի որ կարելի է, օրինակ, նախատեսել որոշ բաղադրիչների վարձակալություն, և դժվար է հասկանալ, թե ինչ բացասական հետևանքներ դա կարող է ունենալ: Եթե օրենսդրին անհանգստացնում է ծառայություն տրամադրողների կենսունակությունը (ինչը օրինական մտահոգություն է), ապա բիզնես պլան ներկայացնելու մասին հստակ պահանջը՝ սարքավորումների կամ դրանց անալոգների վարձակալության մասին բոլոր համապատասխան համաձայնագրերի հետ միասին, կարող է ունենալ նույն էֆեկտը, ինչ ամեն ինչի սեփականատեր լինելը:

Օրենքում վերոհիշյալ կետի հիմնավորումը բացատրվում է հետևյալ ձևով՝ *հաշվի առնելով Հայաստանի անվտանգության նկատառումները, հեռարձակման ցանցի սահմանափակ ռազմավարական ռեսուրսները, ինչպես նաև անձանց տեղեկատվություն ստանալու իրավունքը կենսագործելու անհրաժեշտությունը, օրենքը նախատեսում է, որ մասնավոր հեռարձակման ցանցը պետք է ստեղծվի և գործի գոյություն ունեցող հանրային ցանցից անկախ, օգտագործելով իր սեփական ենթակառուցվածքները (հենայուններ, մալուխներ, հեռարձակման սարքավորում և այլն):* Այնուամենայնիվ, սա չի բացատրում, թե ինչու է անհրաժեշտ, որ մուլտիպլեքսորը լինի ամբողջ ենթակառուցվածքի սեփականատերը, այլ ոչ թե վարձակալի այն որևէ այլ (մասնավոր) ընկերությունից:

Չորրորդ կետում սահմանված է, որ *«մասնավոր մուլտիպլեքսորն իրավունք չունի մատուցելու այլ ծառայություններ, քան այնպիսիները, որոնք բացառապես կապված են հաղորդակցության ցանցի գործունեության և շահագործման հետ»:* Մրա մեկնաբանությունն այն է, որ խիստ կարևոր է ունենալ «հաղորդակցության ցանց»-ի հստակ սահմանում, իսկ այդ սահմանումը կարծես թե բացակայում է օրենքի բնօրինակում և այս փոփոխություններում:

Հինգերորդ կետում ներկայացված են պահանջներ հեռուստահաղորդման (ալիքի) ընտրության վերաբերյալ: Մուլտիպլեքսորը պարտավոր է սահմանված ժամանակահատվածում իր կարողությունների 20%-ը տրամադրել լիցենզավորված հեռարձակողներին: Մնացածը կարող է օգտագործվել տարբեր ձևերով, ներառյալ հենց մուլտիպլեքսորի կողմից, սակայն չտրամադրելով հանրային ցանցի հեռարձակողներին: Այս դրույթը համաչափ է և համահունչ է օրենքի նպատակին, այն է՝ նպաստել, որ ստեղծվեն հեռուստահաղորդումների լրացուցիչ հեռարձակողներ:

Առաջարկվող հաջորդ նոր հոդվածը՝ Հողված 55.2-ը, վերաբերում է մրցույթին: Սա շատ կարևոր դրույթ է, քանի որ մասնավոր մուլտիպլեքսորի գործունեության իրավունքի տրամադրման գործընթացը առանցքային նշանակություն ունի, որպեսզի թե՛ այս գործընթացը և թե՛ մեդիայի լանդշաֆտի ձևավորումը լիարժեք համապատասխանեն

միջազգային լավագույն գործելակարգին:

Գոյություն ունի մրցույթ հայտարարելու վերջնաժամկետ (2016 թվականի մայիսի 1), ինչը լավ է Հայաստանում թվային հեռարձակման անցման հետագա ձգձգումը կանխելու առումով: Այնուամենայնիվ, ձևակերպման մեջ հստակ չէ, թե արդյոք հնարավոր է խուսափել այդ վերջնաժամկետից (*«մրցույթը չկայանալու դեպքում»*): Պետք է լինեն խիստ կանոններ՝ մրցույթի կայացումը ապահովելու համար կամ շատ որոշակի պատճառներ այն կայացնելու անհնարինության մասին: Ներկա տեսքով թվում է, թե կարգավորողը կարող է պարզապես հայտարարել, որ այն չի կայացել, որից հետո այն կրկին կհետաձգվի:

Դիմողներին տրված է երեք ամիս դիմումները ներկայացնելու համար: Սա բավականին երկար ժամանակ է, բայց հնարավոր է, որ նման առաջին մրցույթի հայտարարման համար այդ ժամկետը անհրաժեշտ է, քանի որ ընկերությունները կարող են ոչ բոլոր պատրաստությունները վերջացրած լինեն (ցանցի դիզայն և այլն): Երկար է թվում նաև փորձաքննության ժամկետը: Այդ ժամանակը պետք է լինի իրատեսական, բայց միննույն ժամանակ ոչ շատ երկար: Հողվածը ինչ-որ չափով հստակ չէ, երբ խոսքը գնում է հանրային ցանցի մասին, եթե իհարկե դա չի վերաբերում այն ցանցին, որը մատչելի է հանրությանը:

Եթե սահմանված ժամկետում պատասխան չի ստացվում, ապա համարվում է, որ ցանցը հավանության է արժանացել: Սա դրական է այն առումով, որ այն կանխում է հետագա ձգձգումը: Սա կարգավորողի համար պետք է ծառայի նաև որպես կոչ՝ գործել արագ ու պատշաճորեն, որպեսզի տեղի ունենա բոլոր դիմումների իրական փորձաքննություն ու վերլուծություն: Տեխնիկական եզրակացությունը ստանալուց հետո, կազմակերպվելու են հանրային լսումներ: Կարգավորողը կարող է սահմանել հատուկ չափորոշիչներ այդ գործընթացի համար: Այս ամենը լավ է և համահունչ է միջազգային գործելակարգին: Շահագրգիռ կողմերի մասնակցությունը դյուրինացնելու համար կարելի է դիտարկել նաև ինտերներով հանրային լսման հեռարձակումը կամ մեկնաբանություններ ներկայացնելու թույլատրումը:

Հոդված 4

Ի լրումն թվայնացման գործընթացի համար անհրաժեշտ դրույթների, «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքում տեղ են գտնել այլ փոփոխություններ, որոնք հիմնավորման բացատրության համաձայն, հստակեցնում են գործող օրենսդրական տեքստում որոշ ոչ պարզ կամ ոչ ցանկալի հետևանքները: Դա ներառում է հյուրանոցների կողմից մալուխային ցանցով հեռարձակումների պարտականություններին: Հյուրանոցներին այսուհետ անհրաժեշտ չի լինի ունենալ լիցենզիա մալուխային ցանցով հեռարձակումների համար:

Հոդվածներ 5 և 6

Հանվել է մասնավոր հանրային տարածքներում մալուխային ցանցով հեռարձակումների համար կարգավորողի գրավոր թույլտվություն ունենալու պահանջը: Սա լավ առաջարկություն է, քանի որ թույլտվության անհրաժեշտությունը թվում է անհարկի և կարծես թե լիցենզավորման պահանջ է մի բանի համար, որը, օրենքի համաձայն, չպետք է լիցենզավորի:

Հոդված 7

Ավելացվել է նոր՝ Հոդված 61.1-ը, որը վերաբերում է մասնավոր մուլտիպլեքսորների լիցենզիաների դադարեցմանը: Այս կարճ Հոդվածը տրամաբանորեն բխում է հիշյալ մուլտիպլեքսորների լիցենզավորման մասին նոր դրույթներից և ապահովում, որ իրենց պարտականությունները չկատարելու դեպքում, նրանց լիցենզիաները կարող են դադարեցվել:

Հոդված 8

Հոդված 62.13-ի չեղարկումը համահունչ է կատարված փոփոխություններին:

Հոդված 9

Հոդված 9-ում ներկայացված է տեղական հեռուստառադիոընկերությունների գործունեության մասին 62-րդ Հոդվածի նոր՝ 16-րդ կետը (անցումային դրույթներ): Բովանդակությունն այն է, որ այդ հեռուստառադիոընկերությունները կարող են շարունակել հեռարձակումը՝ մինչև մասնավոր մուլտիպլեքսորների գործունեության սկիզբը: Թեպետ երկարաձգումը՝ առանց փոփոխությունների և նոր պայմանների, լավ գաղափար է, սակայն հստակ չէ, թե ինչու է Հոդվածում նշված երկարաձգում մինչև նոր մրցույթ: Թվում է, թե կարող է կրկին մրցույթ հայտարարվի նույն անալոգային հեռարձակման համար, ինչը չպետք է լինի: Որպես անցումային միջոց, երկարաձգումը պետք է երկարացնել մինչև մասնավոր մուլտիպլեքսորները կսկսեն իրենց գործունեությունը:

Հոդված 10

Օրենքը ուժի մեջ է մտնելու 2016 թվականի հունվար մեկից:

Հիմնավորումներ և ազդեցության վերլուծություն

Նախագծում ընդգրկված են այլ օրենքներին առնչվող որոշ փոքր և դրանց չհակասող փոփոխություններ, ինչպիսիք են՝ լիցենզավորման և պետական տուրքի մասին օրենքները: Կարգավորման ազդեցության գնահատումներ կան նաև հակակոռուպցիոն բնագավառի, բնապահպանական հետևանքների, սոցիալական պաշտպանության և առողջության բնագավառի համար: Կարելի է համաձայնել նման հետևանքների բացակայության մասին գնահատման հետ: Ինչ վերաբերում է մրցակցության և տնտեսության, մասնավորապես փոքր և միջին ձեռնարկությունների վրա կարգավորման ազդեցության գնահատականների մասին, ապա կան հարցեր, որոնց վրա կարող են ներգործել փոփոխությունները, բայց ոչ այնպես, որ այս պահին կարիք կլինի իրականացնելու լրացուցիչ ազդեցության հատուկ գնահատում: Նույնը վերաբերում է նաև բյուջետային բնագավառի վրա ազդեցության գնահատմանը: